ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Աղթամարի վերջին կաթուղիկոս Խաչատուր Շիրոյեանի մահից յետոյ, որ տեղի ունեցաւ 1895 թուի դեկտեմբերի 22 ին, ահա իններորդ տարի է, որ Աթոռը թափուր էր մնացել և թեմը կառավարւում էր կաթուղիկոսական տեղապահ վարդապետով և առանձին հարկ չէր համարուել կաթողիկոսի նոր ընտրութիւն կատարել։ Այժմ, ինչպէս հաղորդում են Կ. Պոլսի հայ թերթերը, Կ. Պոլսի Խառն ժողովը որոշում է կայացրել մօտերումս կաթուղիկոսական ընտրութիւն անել և այդ նպատակով պատրիարքարանից կարևոր հրահանգները տրուել են արդէն ուր որ հարկն է։ Ընտրութեան հետևանքի մասին կծանուցանենք իւր ժամանակին։

ԳՐԻԲՈԵԴՈՎԻ ՄԱՀՈՒԱՆ 75 ԱՄԵԱԿ

Յունուարի 30-ին լրացաւ ռուս յայտնի բանաստեղծ «горе отъ ума» (խելքից պատուհաս) կոմեդիայի հեղինակ Ալէքսանդր Սերգէևիչ Գրիբոեդովի մահուան 75 ամեակը։

Գրիբոեդովը յայտնի է ռուս դրականութեան մէջ որպէս բանաստեղծ և ռուսաց պատմութեան մէջ իբրև պետական գործիչ։ Նա ռուսական դեսպան էր Պարսկաստանում և սպանուեցաւ Թեհրանում պարսիկ ամբոխի ձեռքով։ Նորա մարմինը բերուելով Թիֆլիս՝ թաղուեցաւ Դաւիթ Գարեջացու վանքում Մթածմինդա սարի վերայ։

Նորա մահուան եօթանասնամեակի օրը ռուս դրամատիք դրողների միութեան և Թիֆլիսի արտիստիք ընկերութեան նախաձեռնութեամբ հանդիսաւոր հոգեհանգիստ տեղի ունեցաւ հանգուցեալի գերեզմանի վերայ։ Հոգեհանգստին ներկայ էին քաղաքային վարչութեան կողմից պ. քաղաքագլուխը, զանազան հաստատութեանց և ամեն ազգի խմբագրութեանց ներկայացուցիչներ և մեծ բազմութիւն հանգուցեալ մատենագրի տաղանդը յարգելու համար։ Հոգեհանգստին խօսուեցան Ճառեր և Օպօչինինը արտասանեց մի ոտանաւոր հանգուցեալ դրողի յիշատակին նուիրուած։

Գրիբոեդովի «խելքից պատուհաս» նշանաւոր կատակերգութիւնը առաջին անգամ հայերէնի թարգմանեց հանգուցեալ Կոստանդին Տէր-Աստուածատրեանցը և ներկայացուեց Թիֆլիսի հայկական բեմի վերայ։

«ՏԱՐԱՂ»

«Տարաղ» շաբաթաթերթը յայտնում է, որ այս տարի իւր բաժանորդագրութիւնը շատ յաջող է գնում։ Վերանորոգուած շաբաթաթերթը գաւառներում մեծ ընդունելութիւն է